ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 29/12

Քաղ. Երեւան 27 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. նոյեմբերի 27-ի նիստում (արձանագրություն N 8.10) քննարկեց «ՌԻԽՏԵՐ ԳԵԴԵՈՆ ՆԻՐՏ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից 2012թ. հոկտեմբերի 1-ին ներկայացված «SOFTELLE» (N 1074455) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 115–րդ կետի 1-ին ենթակետը, 116–րդ կետի 1-ին ենթակետը, 117-րդ կետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «ՍՈՖՏԵԼԼԵ» նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան նույնական և նունատիպ ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող շփոթելու աստիճան նման SOFITEL (SOLUXURY HMC 110 avenue de France F-75013 PARIS (FR), IR 406255) բառային ապրանքային նշանի առկայության պատճառով, քանի որ նշաններն ունեն ձայնային նմանություն:

Բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության մերժման որոշման հետ և ստորև ներկայացված են առարկությունները:

Բողոքարկողը նշում է, որ բողոքարկված և գրանցված ապրանքային նշանները գրաֆիկական և հնչյունային տեսանկյունից նայելիս տարբեր են:

Փաստում է նաև, որ բողոքարկված, և գրանցված ապրանքային նշաններն օգտագործվում են բոլորովին այլ ոլորտներում, այսինքն՝ բողոքարկված "SOFTELLE" ապրանքային նշանի դեպքում դա դեղագործությունն է, իսկ գրանցված "SOFITEL" նշանի դեպքում՝ հյուրանոցային ծառայությունները:

Բացի այդ, բողոքարկողը ոչ պակաս կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ ցանկացած դեղորայք վաճառվում է դեղատներում, բժշկի դեղատոմսով, կամ դեղագործ–խորհրդատուի խորհրդով: Այսինքն, այն սպառողը, ով կցանկանա գնել հայտարկված "SOFTELLE" ապրանքային նշանով դեղագործական պատրաստուկը, բնականաբար չի կարող շփոթել այն հյուրանոցային ծառայություններ առաջարկող կայքի հետ:

"Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու" ՀՀ Կարգի 108-րդ կետի համաձայն, հայտատուն սույն դիմումին կից ներկայացնում է հայտատուի՝ ՌԻԽՏԵՐ ԳԵԴԵՈՆ ՆԻՐՏ և հակադրված նշանի սեփականատեր՝ ՍՈԼԱՔՇԸՐԻ էյջէմՍի ընկերությունների միջև կնքված համագոյակցության դեկլարացիան, որում ասվում է, որ միջազգային հայտեր No.1074463 "СОФТЕЛЛЕ" No.1074455 "SOFTELLE" և միջազգային գրանցում No. 406255 "SOFITEL" ապրանքային նշանների միջև համագոյակցությունը հնարավոր է և սպառողին թյուրիմացության մեջ գցելու վտանգ չկա:

Բողոքարկողը խնդրում է վերանայել միջազգային հայտ № 1074455 "SOFTELLE" ապրանքային նշանի վերաբերյալ կայացված գրանցումը մերժելու մասին նախնական որոշումը և այն գրանցել ՀՀ տարածքում:

Կոլեգիայի անդամը՝ բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. հոկտեմբերի 10-ին «ՌԻԽՏԵՐ ԳԵԴԵՈՆ ՆԻՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «SOFTELLE» (1074455) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության դեմ բողոք:

Համառոտ ներկայացվեց ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին հիմքերը, ինչպես նաև բողոքի համառոտ բովանդակությունը: Նշվեց, որ բողոքում բերված են մանրամասն համեմատականներ գրանցված և բողոքարկվող նշանների միջև, ինչպես նաև արձանագրվեց, որ բողոքին կից ներկայացվել է ՌԻԽՏԵՐ ԳԵԴԵՈՆ ՆԻՐՏ և հակադրված նշանի սեփականատեր՝ ՍՈԼԱՔՇԸՐԻ էյջէմՍի ընկերությունների միջև կնքված համագոյակցության դեկլարացիան, որում ասվում է, որ միջազգային հայտեր No.1074463 "СОФТЕЛЛЕ" No.1074455 "SOFTELLE" և միջազգային գրանցում No. 406255 "SOFITEL" ապրանքային նշանների միջև համագոյակցությունը հնարավոր է և սպառողին թյուրիմացության մեջ գցելու վտանգ չկա:

Հիմք ընդունելով վերոհիշյալ նոր հանգամանքը՝ կոլեգիան առաջարկեց բողոքարկված ապրանքային նշանը գրանցել:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, ապրանքային նշանի նախնական մերժման մասին Գործակալության 12.03.2012թ. և կրկնական փորձաքննության՝ 17.08.2012թ. որոշումները չեղյալ ճանաչել և գրանցել ՌԻԽՏԵՐ ԳԵԴԵՈՆ ՆԻՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «SOFTELLE» (N 1074455) բառային ապրանքային նշանը 5-րդ դասի ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան